

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ 50-ԱՄՅԱԿԸ

Ավարտվող 2009 թվականի սկզբներին լրացավ ԼՂՀ առաջին նախագահի, հայ ժողովրդի նորագույն պատմության պայծառ դեմքերից մեկի, խոստումնալից գիտնական, ազգային-ազատագրական պայքարի կազմակերպիչ ու անմնացորդ նվիրյալ Արթուր Ասլանի Սկրտչյանի ծննդյան 50 ամյակը,- մի կարևոր տարեթիվ, որը, ցավոք, Հայաստանի Հանրապետությունում անցավ գրեթե աննկատ:

Ա. Սկրտչյանը ծնվել է 1959թ. փետրվարի 15-ին, Ղարաբաղի պատմական Գիզակ գավառի (Հաղրուփի շրջան) Ուխտաձոր (Էդիլլու) գյուղում՝ ծառայողի ընտանիքում: Վաղ տարիքից ցուցաբերել է բացառիկ սեր ուսման հանդեպ, եղել է գրքասեր, լրջմիտ ու խելացի աշակերտ:

1976 թ. ավարտել է հարազատ գյուղի հայկական միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Այստեղ Արթուր Սկրտչյանը նեղ մասնագիտություն է ընտրել. իր ժամանակին «քաղաքական պահանջարկ» չվայելող ազգագրությունը: Ընտրության խնդրում որոշակի դեր է խաղացել հեղինակավոր ազգագրագետ Յուրի Սկրտումյանը:

Մասնագիտության ընտրությունից սկսած՝ մինչև Հաղրուփի Պատմա-երկրագիտական թանգարանում աշխատանքի անցնելը, Ա. Սկրտչյանն ինչպես անհատական նախաձեռնությամբ, այնպես էլ ճանաչված մասնագետների կողմից կազմակերպված նպատակային գիտական արշավների կազմում, հարուստ ժողովրդագիտական-ազգագրական նյութ է հավաքել Խորհրդային Հայաստանի և նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մի շարք բնակավայրերում:

1977 թ. երկրորդ կուրսի ուսանող Ա. Սկրտչյանը ընկերոջ՝ հնագետ Համլետ Պետրոսյանի հետ մեկնում է Խաչեն, շրջագայում ու նյութեր հավաքում Ղարաբաղի տասնութ գյուղերից: Դա գիտական նպատակներով ձեռնարկված նրա առաջին ուղևորությունն էր հայրենիք: Այնուհետև Ղարաբաղի նյութական մշակույթը մշտապես մնում էր նրա ուշադրության կենտրոնում: Իսկ հետագա տարիներին Ա. Սկրտչյանը ժողովրդագիտական նյութեր է հավաքում նաև Հայաստանի մի շարք շրջաններում՝ Թումանյանի, Արթիկի, Արտաշատի, Դվինի, Աշտարակի, Էջմիածնի, Մեղրիի, Կապանի, Գորիսի, Կարմիրի բնակավայրերից ու գյուղերից: Նրա վրա խոր տպավորություն են թողնում Հայաստանի պատմամշակութային հուշարձանները, ավեր ու կանգուն եկեղեցիները՝ Խոր Վիրապը, Գառնին, Գեղարդը և այլն:

թիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԵՄ համահայկական հանդես

1979 թ. ուսանողական գիտական պրակտիկայի (գործնական պարապմունքի) է մեկնում Գոնի Ռոստով, ծանոթանում Նոր-Նախիջևանի պատմաճակութային հուշարձաններին, գաղթօջախի հայության կյանքին:

Ուշագրավ էր հատկապես նշանավոր ազգագրագետներ Ս. Հարությունովի (Մոսկվա), Յու. Սկրտումյանի, ինչպես նաև Հայաստանի ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի աշխատակից, նշանավոր հայ փիլիսոփա Է. Մարգարյանի կազմակերպած «Կենսաապահովման բարեկրթությունը (կուլտուրան) և էթնոսը» նպատակային գիտարշավը, որին մասնակցում էր Ա. Սկրտչյանը՝ «Բնակավայրեր և բնակարաններ» թեմայով: Գիտարշավի նյութերը հետագայում տպագրվեցին առանձին գրքով, որում նշված էին մասնակից ուսանողների ազգանունները:

Ա. Սկրտչյանը ուսանողական տարիներին ի հայտ է բերում հավաքած ազգագրական նյութն իմաստավորելու, ընդհանրացնելու, նյութից բխող հիմնավոր եզրակացությունների հանգելու ունակություն: Նրա կուրսային աշխատանքները մշտապես բարձր էին գնահատվում: Այդ աշխատանքներից մեկը նվիրված էր Գարաբաղի բնակավայրերի տիպաբանական ուսումնասիրությանը, որը հեղինակը հետագայում մտցրել է իր ատենախսության մեջ:

Ա. Սկրտչյանի ավարտական դիպլոմային աշխատանքի թեման էր «Երվանդ Լալայանի ազգագրական գործունեությունը և «Ազգագրական հանդեսը»»: Դիպլոմային աշխատանքը սովորական, շարքային ուսումնասիրություն չէր: Ա. Սկրտչյանը գիտական լուրջ ընդհանրացումներ է կատարել Ե. Լալայանի ազգագրական գործունեության վերաբերյալ՝ նրան իրավամբ համարելով հայոց ազգագրության գիտական դպրոցի հիմնադիր: Ավելորդ է ասել, որ դիպլոմային աշխատանքի հրապարակային պաշտպանությունն անցել է մեծ հաջողությամբ:

Ա. Սկրտչյանը համալսարանը ավարտելուց հետո՝ 1981 թ. ընդունվում է Մարդարապատի ազգագրության պետական թանգարան՝ գիտնական-մասնագետի պաշտոնով: Նկատի ունենալով երիտասարդ գիտաշխատողի խոստումնալից ապագան՝ համապատասխան երաշխավորագրերով Ա. Սկրտչյանը 1982 թ. մեկնում է Մոսկվա և ընդունվում ԽՍՀՄ ԳԱ Միկլուխտ-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան: Նրա գիտական ղեկավար է նշանակվում ինստիտուտի Կովկասի բաժնի վարիչ, ճանաչված ազգագրագետ Վ.Կ. Գարդանովը: Ապագա թեկնածուական ատենախոսության թեմա է ընտրվում «Լեռնային Գարաբաղի հայերի հասարակական կենցաղը, 19-րդ դարի վերջ, - 20-րդ դարի սկիզբ»:

Մոսկվայում ուսումնառության տարիներին Ա. Սկրտչյանը հնարավորություն ունեցավ խոր և լայն գիտելիքներ ձեռք բերել ազգագրության պատմության ու տեսության վերաբերյալ: Սակայն ժամանակները խառն էին, հատկապես հայադրբեջանական ազգամիջյան հարաբերություններն արդեն լարված էին և ասպիրանտի առաջ շատ պատասխանատու ու լուրջ խնդիր էր կանգնած. Գարաբաղի հայության հանրային կեցության՝ այլ էթնիկ հանրույթի հետ համակեցության, համայնքային ու ներհամայնքային կապերի ուսումնասիրությունը: Ա. Սկրտչյանը հաջողությամբ ավարտում է աշխատանքը, սակայն մինչ այդ արդեն պատրաստ ատենախոսության հրապարակային պաշտպանությունը տեղի ունեցավ 1988 թ. նոյեմբերի 2-ին Երևանում: Երիտասարդ ազգագրագետ-գիտնականի ատենա-

խոսությունը բարձր է գնահատվում ինչպես նրա ղեկավարի, այնպես էլ ընդդիմախոսների՝ պատմական գիտությունների դոկտոր Է. Կարապետյանի, պատմական գիտությունների թեկնածու Գ. Ստարովոյտովայի (Մոսկվա) ու Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից գիտական խորհրդի անդամների կողմից:

Ատենախոսության վերաբերյալ եզրակացության մեջ Սիկլուխո-Մակլայի անվան ինստիտուտի Կովկասի բաժինը եզրակացնում էր, որ. «Ատենախոսությունը որոշակի ներդրում է հայագիտության ասպարեզում», իսկ գիտական ղեկավար Վ.Կ. Գարդանովը Ա. Սկրտչյանի ավարտածառը համարում էր էական ներդրում արցախագիտության մեջ: «Ուզում եմ շնորհավորել ատենախոսին, - նշում էր ազգագրագետ Յու. Սկրտումյանը,- որ նա այսքան բարդ ժամանակներում, երբ Խորհրդային Միությունը ցնցված է Արցախյան հիմնախնդրով, ստեղծել է աշխատություն, որի մեջ գործնականում չի արտահայտված իր ազգային պատկանելությունը: Մենք առնչվում ենք կատարելապես անկողմնակալ, իսկապես գիտական ուսումնասիրության հետ, գրված քաղաքացիական բարձր դիրքերից»: Եղան նաև այլ կարծիքներ՝ ատենախոսությունը բարձր, ըստ արժանվոյն գնահատող: Գիտական խորհուրդի անդամները միաձայն որոշում են Ա. Սկրտչյանին շնորհել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

Երիտասարդ, խոստումնալից, անձնական բարեմասնություններ և քաղաքացիական արժանապատիվ կեցվածք ունեցող գիտնականի առջև գործելու ասպարեզ էր բացվում, բայց նա մինչ այդ՝ 1986 թվականին, սեփական ընտրությունը արդեն կատարել էր՝ ասպիրանտուրան ավարտելուց հետո մեկնելով հայրենիք ու ստանձնելով Հաղորդի Պատմա-երկրագիտական թանգարանի տնօրենի պաշտոնը: Նա հաստատվեց Հաղորդում իր ընտանիքի, կնոջ՝ Գոհարի ու երկու որդիների՝ Արեգի ու Սևակի հետ: Ամուսնացել էր 1982 թվականին՝ տակավին Սարդարապատի թանգարանում աշխատելու ժամանակ, որտեղ աշխատում էր նաև նրա ապագա կինը:

Թանգարանի տնօրենի պաշտոնը, աշխատանքի փորձը, մասնագիտության բերումով՝ ավելի խոր ծանոթությունը ազգային վերելք ապրող դարաբաղյան կյանքին, ժողովրդի կենցաղին ու բարոյահոգեբանական վիճակին, նպաստեցին, որպեսզի բարձիթողի վիճակում գտնվող թանգարանը նա կարճ ժամանակամիջոցում դարձնի իր կոչմանը հարիր հաստատություն: Եվ ավելին, Հաղորդի Պատմա-երկրագիտական թանգարանը պատմական, ազգագրական արժեքավոր նյութերի ցուցադրությանը զուգահեռ, կատարում էր կրթական, մշակութային, գեղագիտական, ռազմահայրենասիրական դաստիարակության գործառույթներ:

1988 թ. ծավալված Ղարաբաղյան շարժումը կլանեց Արթուր Սկրտչյանին ամբողջովին, ու նա հայտնվեց Հաղորդի շրջանում տեղի ունեցող իրադարձությունների կենտրոնում ո՛չ միայն որպես առաջնորդ, կազմակերպիչ-ղեկավար ու հրամանատար, այլև անմիջական մասնակից, զինվոր: Նշենք, որ Արթուր Սկրտչյանը 1988 թ. հունվարին Ղարաբաղից Մոսկվա մեկնած երկրորդ պատվիրակության կազմում էր:

1991 թ. սեպտեմբերին՝ Ղարաբաղն անկախ հանրապետություն հռչակվելուց և նույն տարվա դեկտեմբերին՝ հանրաքվեի միջոցով այդ փաստը հաստատվելուց

հետո, հարկ եղավ ստեղծել պետությանը անհրաժեշտ մարմիններ: 1992 թ. հունվարի 7-8-ին կայացած ԼՂՀ Գերագույն խորհրդի անդրանիկ նիստում նրա նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը. 48 պատգամավորներից 44-ը քվեարկեցին նրա օգտին:

Իր պաշտոնավարության երեքուկես ամիսների ընթացքում Ա. Մկրտչյանը ի հայտ բերեց պետական գործչին վայել լրջություն, հերոս Գարաբաղի ղեկավարին բնորոշ արժանապատիվ կեցվածք, երիտասարդ հանրապետության առջև ծառայած խնդիրներն արագ ու ժամանակին լուծելու կարողություն՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու խնդիրը: Նա դրեց այն հիմնաքարը, որի վրա բարձրացավ Լեռնային Գարաբաղի պետականությունը: Ա. Մկրտչյանի պաշտոնավարության շրջանում ազատագրվեցին Ստեփանակերտը օղակող Մալիբեյլին ու Կրկժանը, Խոջալու ավանը, ինչպես նաև Հադրութի մի շարք գյուղեր: Նա չհասցրեց տեսնել Շուշիի ազատագրումը, թեև ռազմական գործողությունների ծրագրի մշակման գործուն մասնակիցն էր:

Ա. Մկրտչյանի գիտական նախասիրությունների իրագործման ժամանակաշրջանը համընկավ Գարաբաղյան ազատագրական պայքարի բուռն վերելքի հետ և տոհմիկ, ավանդապահ ընտանիքում մեծացած, հիմնավոր հայկական կրթություն ստացած, ազգային գաղափարներով սնված երիտասարդը նետվեց այդ պայքարի հորձանուտը:

Ա. Մկրտչյանի կյանքի թելը կտրվեց 1992 թ. ապրիլի 14-ին՝ անբացատրելի հանգամանքներում:

Ալվարդ Ս. Գազիյան

Summary

50th ANNIVERSARY OF ARTHUR MKRTCHYAN – THE SCIENTIST AND NATIONAL-STATE FIGURE

Alvard S. Ghaziyani